

ԻՄ ՎԱՆՔՍ

Դրաքեանի մը անտիպ յիշատակա-
գիրք :

(Տես երես 214)

Մեծաւ դժուարութեամբ քանի մը
էջ կարդացի. վասն զի հազիւ այբու-
բենը կը ճանչնայի, տասը տարուան մէջ
մոռցած ըլլալով գրեթէ բոլորովին՝ ինչ
որ մեր գեղին ազնիւ ժողովրդապետը
սորվեցուցած էր ինծի: Կարդացածիս
վրայ խորունկ մտածեցի, և կարծես թէ
այդ հոգեւոր ընթերցման և այդ մտադիր
խոկման արթնցուցած սուրբ մտածու-
թիւններն միշտ աւելի զօրութիւն և
խրախոյս կ'ազդէին ինծի: Եթէ առաջ
աբբային առջև ելլելու մտածութենէս
կը դուայի, հիմա անձկանօք կը փափա-
քէի երթալ, իբրեւ թէ գիտնայի որ այն
տեսութեամբ իմ բովանդակ կենացս եւ-
ջանկութիւնն պիտի ապահովնար: Բա-
րերարն Աստուած այս եղանակաւ և այն-
չափ ուղորմութեամբ կը վարձատրէր
ապստամբ մը և մեղաւոր մը, որ անանկ
սոսկալի կերպով թշնամաներ էր զին-
քը:

Բայց դեռ չէր հասնէր այս ժամը, և
դեռ ոչ ոք կու գար կանչելու զիս. գրե-
թէ կասկածեցի որ արբան լաւ մը բա-
ները տեղեկանալով՝ իմացած ըլլայ իմ
անմեղութիւնս, և անոր համար որոշած
ըլլայ որ իր խորհրդոյն կատարումն 'ի
կախ մնայ: Բայց այնու հանգերձ ես
դարձեալ կը փափաքէի իրեն և բոլոր
միանձանց և ինծի ուղղած ծանր ամ-
բաստանութեանց բոլոր մէկալ վկայ ե-
ղողներուն առջև երևնալ: Գրեթէ ըսեմ
ինծի պէտք մը կ'երևար՝ նոր մահացուց-
մունք և նոր ցաւեր ունենալու. իմ ոճրա-
գործութիւնս անանկ մեծ կը տեսնուէր
ինծի, որ անոր համեմատութեամբ ա-
մենայն պատիժք՝ թեթեւ և ոչինչ բան
մը կը սեպուէին ինծի: Իմ ներսս կը
զգայի նեղուելու պէտքը, Աստուծոյ
թողութիւն ընդունելու համար. և շատ

անգամ աղաչեցի իրեն՝ չխնայել ինծի
որ և իցէ փորձութիւն և վշտակրու-
թիւն, ինչպէս նաեւ երբեք չպարգևել
ինծի պզտի մխիթարութիւն մը և թե-
թեւ փոփանք մը. միայն թէ իրմէ նե-
րումն ընդունէի, ամենայն ինչ թեթեւ,
տանելի, մանաւանդ թէ հեշտալի և ու-
րախական կ'երևար ինծի. և այն ատե-
նէն վերջը ինծի և Աստուծոյ՝ հաստա-
տութեամբ խոստացայ, իմ մնացած
օրերս արտասուաց, նեղութեան, ցա-
ւոց և մահացուցման մէջ անցընել, ա-
մենայն անմեղ հաճոյքէ և աննշան սփո-
փանքէ ևս բացարձակ զրկելով զիս: Աս-
տուծոյ շնորհքովը պահեցի միշտ այս
խոստմունքը, և այն պատահարներն ու
րոնցմէ հարկեցայ անցնելու, ընդդէմ
կամացս իսկ չխոտորեցուցին զիս անկէ:

Վերջապէս արեւը մոնալուն մէկ ժամ
մնացած, աշխատաւոր եղբայր մը կու
գայ կ'իմացընէ ինծի որ արբան ժողովի
մէջ ինծի կը սպասէ: — Թէպէտ այս
հրաւերին պատրաստուած էի, և թէ-
պէտ անձկանօք այս վայրկենին կը սպա-
սէի, բայց և այնպէս այն ազդեցու-
թեան՝ սիրտս ճնշել մը զգացի: Ստի-
պուեցայ սաստիկ բռնութիւն մը ընել
ինծի. կերպով մը բոլոր ուժս ժողովու-
անկողնէն իջնելու և եղբօրը ետէն եր-
թալու որ արդէն սկսեր էր երթալ: Մեկ-
նելուս ժամանակ աղաչանաց և գորովոյ
աչք մը դարձուցի Աստուածածնայ պատ-
կերին, իբր մասնաւոր օգնութիւն մը
հայցելով իրմէ, և վրաս խաչ հանելով,
նիւթաբար առջևէս դացող եղբօրը ե-
տէն սկսայ երթալ, դժուարաւ ծուն-
կերս քարշելով, որոնք կարծես թէ զիս
վեր բռնելէ ետ կը կենային:

Ժողովոյն սրահը մտայ. արբայն սո-
վորականին պէս մէջ տեղը կեցեր էր.
ամեն կողմէն բոլոր միանձունքն իրենց
ճերմակ վեղարներովն կանգուն ոտքի
վրայ երկու կարգ բռներ էին. անոնցմէ
վերջը առաւօտը հիւրատան մէջ տեսած
ներս բոլոր լուռ կեցեր էին: Մտնելուս
պէս, արբային մէկ ակնարկութեամբը
ամենքն ալ ծնկան վրայ եկան: Արբայն
բարձր և վսեմ ձայնով մը սկսաւ եկ

սուրբ Հոգին, զոր միանձուներն ու օտարականները ծանր ծանր երգեցին. այն լմենալէն ետեւ, արբան սկսաւ Ողորմեան, զոր նոյնպիսի ծանրութեամբ բոլոր հոն եղողներն զուրցեցին: Վերջը ոտք ելան, և ամեն մարդ նորէն իր տեղը կայնեցաւ նոյն անշարժութեամբ և առջի լուծեամբ: Դիւրին է երեւակայել թէ այն վայրկենին ես ինչ կ'ըլլայի. ոչ երբեք կախաղանին վրայ ելլելու յանցաւոր մը զգացած է անշուշտ այնպիսի սոսկալի տագնապ մը ինչ որ ես կը զգայի՝ իմ դատավճռոյս սպասելով:

Արբան կարգէ դուրս խիստ ծանրութեամբ մը այսպէս սկսաւ ըսել.

— Դու գիտես քու վրադ եղած ամբաստանութիւններն. գիտես որ պայծառ ու յայտնի են քու եղեռնագործութեանցդ ապացոյցներն: Բոլոր հոս ներկայ եղողներն լիովին կը ճանչնան զքեզ հիմա, և ամենքն ալ գիտեն թէ ինչպիսի յամառեալ մեղաւոր մըն ես դու: Խոնարհէ անգամ մը Աստուծոյ առջև, որ օր մը քու ահաւոր և անաչառ դատաւորդ պիտի ըլլայ. և մշտնջենաւոր ու անպատմելի պատիժներով քու յանցանքներդ քաւել պիտի տայ: Ըսէ ինծի. հոս ներսը ապաստանելէդ առաջ բանտի մէջ կեցա՛ր՝ քու տէրդ թունաւորելուդ համար, և մարդ մը սպաննեցիր սոսկալի և զարհուրելի եղանակաւ: Անկեղծ եղիր և պատմէ ամեն բան: Կը պատուիրեմ քեզի յանուն Աստուծոյ, այն Աստուծոյ որ ամենայն մարդկան սիրտը կը զննէ և ուսկից ծածուկ և անծանօթ բան մը չկայ:

Այս այնպիսի ձայնով մը եղած հրամանին, որուն ընդդիմանալ չկարենալս կ'իմանայի, ամօթոյ և ցաւոց զգացմունք մը տագնապեց և շարժեց զիս անանկ կերպով՝ որ բառ մ'ալ չէի կրնար յօդել: Ես ինքնին պիտի բանայի դարձեալ այն արիւնալից վէրքը՝ զոր ամեն հնարքով կը ջանայի գոցել, և 'ի ներկայութեան այնչափ անձանց պիտի պատմէի իմ գարշութիւններս և հրապարակաւ այնպիսի անզուրթ ոճրագոր-

ծութեան մը զիս յանցաւոր պիտի խոստովանէի: Բայց ողորմածն Աստուած շուտով ինծի օգնութեան հասաւ. յիշեցի իրեն ըրած խոստմունքս, և կամացս վերջին ճգամբ մը, երկնային շնորհօք զօրացած, ամեն դանդաղութիւն մէկդի թողուցի, և համակամութեամբ յանձն առի այս նոր և սոսկալի փորձը: Ծնկան վրայ ինկայ, և յորդառատ արտասուօք լալով դողդոջուն ձայնով կանչեցի.

— Այո, հայր իմ, ես մեծ մեղաւոր մըն եմ. մարդկային չարութեան չերեւակայած և չկատարած սոսկալի ոճիրն գործեցի: Տասը տարուան բանտարգելութիւնն բաւական չեղաւ զիս պարտուց ճամբուն և ուղիղ ընթացից բերելու, ուսկից միայն պէտք է որ բարի քրիստոնեայ մը երթայ: Մեղանչեցի, մեծապէս մեղանչեցի, որուն համար ամենայն խոնարհութեամբ սրտի Աստուծմէ և մարդկանցմէ ներումն կը խնդրեմ: Ամեն բան կ'ընդունիմ Աստուծոյ և քու ձեռքէդ, ո՛վ հայր իմ, որ հոս զինքը կը ներկայացնես: Ո՛ր և է չարիք, որ և է նեղութիւն կրելու ալ ըլլամ, բնաւ իմ չարութեանս մեծութեանը չկրնար հաւասարիլ: Եթէ երբեք Աստուծոյ առջև այն ինծի տրուած տասը տարուան բանտարգելութեան արժանի չէի, իրեն կը նուիրեմ զանոնք իբրեւ դոյզն հատուցում մը վերջէն ըրած ոճրագործութեանս, և կ'օրհնեմ և շնորհակալ կ'ըլլամ անոր որ առանց ուղելու ինծի համար այսպիսի բարեգործութեան մը պատճառ եղաւ:

Այս ըսելուս ժամանակ, աջ կողմէս խոր հեծութիւն մը կը լսեմ. գիպուածով աչքս ան կողմը կը դարձնեմ և կը տեսնեմ միանձն մը որ ձեռքերը կուրծքը կ'ամփոփէ, և արտասուաթաց աչք ինծի կը նայի: Հիւրընկալ հայրն էր, զոր նախ և առաջ տեսայ երբ որ Թրաքբան մտայ:

Արբան հրամանը կրկնելով, սկսայ ընդարձակ կերպով և մանրամասն պարագայիւք խեղճ Պաւտիի սոսկալի սպանութեան պատմութիւնը: Այն ոճրա-

գործութեան յիշատակութիւնը, այն սրտիս համար ցաւալի պարագաներն, այն մտքիս սոսկումն բերող պատահարը, եարդիւնայի յիշատակը, Պաւտիի իմ պատճառաւս կորսուելու մտածութիւնը, բոլոր այս անողորմ գործոց և դժնգակ խորհրդոց բովանդակութիւնն անանկ կերպով մը երեակայութիւնս այլայլեցին և լքեալ ու խռովեալ միտքըս վրդովեցին՝ որ պատմութեանս վերջը չկարենալով բռնել զիս, երեսիս վրայ գետինն ինկայ, գրեթէ զգայութիւններս կորուսած և իբր նուաղման մէջ:

Երկու միանձունք վերուցին զիս մէկէն, և կոշտ աթոռի մը վրայ նստեցուցին: Մահուան պաղ քրտինք մը կ'իջնէր ճակտէս. դանդաղ և դժուարաւ կը շնչէի, և սիրտս այնպիսի բռնութեամբ կը բաբախէր որ կարծես թէ բուն կ'ուզէր դուրս ելլել կուրծքէս: Բոլոր հոն եղողներն յայտնապէս կարեկցութեան և սոսկման մէջ էին. նոյն իսկ արբան յուզեալ և խռովեալ էր: Առջի կողմէն ուրիշ խոր հեծութիւն մ'ալ լսուեցաւ. նոյն հիւրընկալ հայրն էր, որ ամենէն աւելի խռովեալ և լալագին կ'երևար:

Այս ատեն արբան քաղցր և հեշտալուր ձայնով մը, հազիւ լալը բռնելով՝ ըսաւ. Որդեակ, հիմա որ յանցանքդ խոստովանեցար, ահա քու վճիռդ կուտամ:

Եւ վերջը միանձանց դառնալով աւանկ խօսեցաւ.

— Եղբարք, Աստուծոյ ողորմութիւնն այս անգամալ յաղթանակեց: Սրտալիր օրհնենք զինքը որ մեր խոնարհ մենաբանին վիճակեցաւ՝ հոս երկրիս վրայ մեղաւորի մը դարձը արդիւնացընելու: Բոլորով սրտիւ գոհութիւն տանք իրեն որ ուրիշ եղբայր մը խաւրեց մեզի: Եկուր, ըսաւ վերջը ինծի, եկուր, որդեակ իմ սիրելի. կը տարածեմ քեզի թեւերս և սիրով կը զրկեմ դքեզ. այս գրկախառնութեամբս ընդունէ անոր օրհնութիւնը՝ որ, թէպէտ անարժանութեամբ, հոս ներսը ամենայն մարդկան երկնաւոր հայրը կը ներկայացնէ:

Այս ըսելով՝ բացաւ թեւերը, դէպ ՚ի ինծի քանի մը քայլ առաւ, և զգուշնօք գրկեց զիս, առատ արցունք թափելով: Ես դէպ ՚ի իրեն վազեցի, ծունր զրի առջևը, և երկու ձեռքերը բռնելով՝ գորովանօք և եռանդեամբ կրկին և կըրկին համբուրեցի: Բոլոր միանձունքն կը հեկեկային և տղու մը պէս կուլային. նոյնպէս կ'ընէին նաև օտարականներն:

Արբան ձեռքէս բռնեց, պատին վրայ կախուած խաչելութեան առջևը տարաւ:

— Եղբարք, ըսաւ, ծնկան վրայ եկած եղանակեմք գոհութեան երգն առողորմածն Աստուծոյ:

Եւ ամենքն ալ Զքեզ Աստուծոյ երգեցին:

Զքեզ Աստուծոյ լմննալէն վերջը արբան դարձեալ համբուրեց զիս: Ես բովանդակ զեղմամբ սրտի իրեն ձեռքն համբուրեցի, և ուրախութենէս ու ափշտութենէս գրեթէ ինքիրմէս դուրս ելած՝ իմ խուղս տարուեցայ:

Բոլոր գիշերը չկրցայ աչքս գոցել. երկուքին՝ առաւօտեան ժամերգութեան զանգակը զարկաւ, և ես դեռ ոտքի վրայ էի: Բնաւ կամք չունեցայ անկողնոյն վրայ հանգչելու. կարծես թէ այն յարդին մէջ սուր փշեր ծածկուած էին, մինչդեռ աղօթելով ու լալով զուխս վրան կը զնչէի: Գնացի եկեղեցին և ինչուան առաւօտեան ժամերգութիւն լմննալը կեցայ հոն: Ճաշէն ետե կանչեց զիս արբան, և ըսաւ ինծի որ Աստուածածնայ վերափոխման օրը Դրաբեան զգեստին հանդիսաւոր պրեմառութիւնս պիտի ըլլայ: Բայց սակայն, աւելցուց, սակայն ազատ ես դեռ: Իսկ եթէ մտքիդ վրայ հաստատուն կը կենաս, շնորհակալ եղիր Աստուծոյ, և մեզի եղբայր եղիր:

Ութօրեայ առանձնութեամբ այս ամենակարևոր գործոյն պատրաստուեցայ. բոլոր այս ժամանակս խղէս դուրս չէի ելլեր, բայց թէ միայն եկեղեցի երթալու համար. և բոլոր այս ութ օրուանս մէջ ուրիշ բան չկերայ՝ բայց եւ

թէ սե հաց, և ուրիշ բան չխմեցի՝ բայց եթէ ջուր միայն: Ինծի իբրև հոգևոր դաստիարակ տրուեցաւ այն սովորական հիւրընկալ հայրը: Արբան կ'ուզէր որ ինքը նաև խոստովանահայրս ըլլայ. բայց ինքը խնդրեց և ընդունեցաւ որ անկից ազատ ըլլայ: Վերջէն իմացայ պատճառը:

Աքեմառութեան նախընթաց օրը, արբայն երկայն բարակ բացատրեց ինծի դրաբեանի խըստակրօն և ապաշխարող կեանքը. և ըսաւ որ նորընծայութեանս միջոց կը փորձեմ զայն, որով և հաստատապէս ընդունուած չէի դրաբեան: Վերջը Աստուծոյ կամքը ճանչնալու համար իրմէ մասնաւոր լոյս խնդրելու կերպին վրայ քանի մը խորհուրդներ տուաւ, աւելցնելով որ սրտանց և յարատեւ աղաչեմ իրեն, վասն զի քան զամեն ժամանակ աւելի հիմա հարկաւոր էր մասնաւոր և եռանդագին աղօթքը: — Սոսկալի ժամանակներ կը մօտենան, կանչեց արբայն գրեթէ մարգարէական ձայնով մը, մեծ և անլուրջաբովութիւններ ապականելու վրայ են երկիրս, և Աստուծոյ թշնամեաց բարկութիւնն նաև այս սուրբ և լռին բնակարանաց մէջ պիտի մանէ: Անոր համար մի կարծեր թէ այս տեղս միշտ մեզի և քեզի համար հանգստեան և խաղաղութեան տեղ մը ըլլայ. պատերազմի դաշտ մըն է ասիկայ, ուր քու անձիդ և հոգևոր թշնամեացդ դէմ պիտի պատերազմիս անդադար: Թերևս ուրիշ թշնամիք ալ աւելնան, որոնք երկայն ժամանակէ 'ի վեր անկից հեռու էին. ամեն բանի պատրաստ եղիր, և ամեն բանի մէջ ջանա Աստուծոյ կամքը կատարելու: Եթէ այս նախագուշակութիւնքս կը վախճընեն զքեզ, եթէ այս վտանգաց առջև հոգիդ և սիրտդ դողալ կը զգաս, այս տեղս քեզի համար չէ: Իսկ եթէ բարեբար Աստուծոյ շնորհքը զօրացած կը ցանկաս աներկիւղ և քաջասիրտ ընդդիմանալ այս փորձութեանց, և կ'ուզես արութեամբ և հաստատութեամբ Աստուծոյ պատերազմը պատերազմել, եկուր մեր մէջը յանուն Աս-

տուծոյ և իւր սուրբ օրհնութեամբը՝ զոր բոլոր սրտով կը շնորհեմ քեզի:

Այս ըսելով՝ վերուց ձեռքը և վրաս խաչին նշանն ընելով օրհնեց զիս յայտնի գորովանօք: Ես ալ կնքեցի զիս նշանաւ խաչին, և յարգանք արբային ձեռքը համբուրելով, խուղս դարձայ:

Իրիկունը հիւրընկալ հայրը վաղուան հանդիսին վերաբերեալ բաները սորվեցընելէն վերջը, այսպէս ըսաւ ինծի.

— Հենրիկ, այս վերջին անգամս է որ այս անունով կը կանչեմ զքեզ. վաղը կը մեռնին քեզի համար մարդն և աշխարհ. և դրաբեանն ու երկինք կը մնան: Զաշխարհ թողլէդ առաջ քեզի հարցմունք մը ունիմ ընելիք, որ մեր սուրբ արբային թոյլտուութեամբը կըրնամ ուղղել քեզի: Վաղը ալ չեմ կըրնար ընել զայն, և դու չես կրնար պատասխանել:

— Եւ ի՞նչ է այս հարցմունքը, հայր իմ:

— Կը ճանչնաս զիս:

— Կը ճանչնամ զքեզ, հարցուցի՝ լի զարմացմամբ:

— Այո, կը ճանչնաս զիս:

— Ոչ, չեմ ճանչնար:

— Ամենեւին:

— Ամենեւին:

Այս պատասխանիս, եղբայրը քանի մը վայրկեան լուռ կեցաւ: Հոգած և մտախորհ կեցեր էր, ինչպէս մէկ մը որ ինչ ընելուն վրայ կը տարակուսի: Կարծես թէ կ'ուզէր լուր և խօսել. չըթուեք կը շարժէր և բերանը կը բանար իբր խօսք մը զուրցնելու. վերջը նորէն կը գոցէր և առջի անշարժութեանն ու լուռութեանը կը դառնար: Այս միանձնը երթալով խորհրդաւոր անձ մը կ'ըլլար ինծի, և երբեմն նաև իր վրայօք միտքս կ'սկսածներ ծագել կու տար:

— Ուրեմն զիս չես ճանչնար, հարցուց դողդոջուն ձայնով մը և անհնարին ճգամբ:

— Ինչպէս որ ըսի, ամենեւին չեմ ճանչնար զքեզ:

— Աղէկ ուրեմն. վաղը կը ճանչնաս: Սովորականէն աւելի մեծագոյն գորու-

վանօք համբուրեց զիս . և մէկ ձեռքովը աչքէն թափած արցունք մը սրբեց , և խոր հառաչանք մը արձակելով , կամաց կամաց բացաւ դուռը և գնաց :

Կէս գիշերին առաւօտեան ժամեր , գութեան զանգակը զարկաւ . ես դեռ անկողնոյս քով ծնկան վրայ եկած կ'աղօթէի : Խղիս դրան զարնուիլը կը լսեմ . կը բացուի , և հիւրընկալ հօրը մտնելն կը տեսնեմ :

— Որդեակ , ըսաւ ինծի՝ հաղիւ թէ մոռաւ , որդեակ , այն մեծ ժամը , ժամն Աստուծոյ , զաշխարհ թողլու ժամը ահա զարկաւ : Սոյն այս ժամուս , շատ տարի կայ որ քու գեղիդ եկեղեցւոյն զանգակը 'ի ժողով կը վարնէր . երկու իրիկուն վերջը , այս ժամուս դու գիշերուան մթութեան մէջ հօրդ դիակին քովը կը թափառէիր . երկու տարի վերջը նոյն ժամուն՝ տիրոջ մահը կ'ողբայիր . նոյն ժամուն ապառաժուտ քարայրիմը մութ կամարացը տակ սարսափով կը քստմընէիր . դարձեալ այս ժամս՝ ծառի մը կատարէն բարեկամ մը կը կանչէիր , որ իր արեանը մէջ թաթաւած չէր կրնար պատասխանել քեզի . և քանի մը ամիս առաջ սոյն այս ժամս մարդասպանի մը խղճի խայթերէ հալածուած՝ անտառի մը մէջ կը քալէիր : Քեզի և ինծի համար ինչպիսի ժամ է ասիկայ : Աղիտաւոր ժամ մը որ այնչափ անօրէնութիւններ կը յիշեցնէ , և այնչափ ոճիրներ միտք կը բերէ : Հենրիկ , ահա անգամ մ'ալ այս անուամբ կրնամ կանչել զքեզ : Երբ կէս գիշերին դրաբայի զանգակին զանգիւնը զԱստուծո՞ր հնաբանելու կանչէ զմեզ , այս ձայնը երկուքնեքուս սրտին մէջ ալ մահաբեր գանչով մը պիտի հնչէ . այս ձայնը տաանուշորս տարիէ 'ի վեր կը յիշեցնէ ինծի դղեկին հրդեհը , տիրոջ և հօրդ մահը , խեղճ Լամբերտի կախաղանի վրայ սպանութիւնը , և սև քարայրին ամբարշտութիւններն . քեզի ալ պիտի յիշեցնէ միշտ Պաւտիի սպանութիւնը , և Աստուծոյ ողորմութեան առաջին ձայները , որ զքեզ խղճի խայթով յապաշխարութիւն կը հրաւիրէր : Այս սոսկալի ժա-

մուս , ցվախճան միացընենք մեր սրտերը , և երկուքնիս ալ հողով կցորդեալ , մերչարութեանցը համարներումն խընդրենք Աստուծո՞մէ :

Հիմա որ այս ամեն բան քեզի ըսի , աւելցուց՝ քիչ մը կենալէն ետեւ , գիտեմ ո՞վ եմ :

Ես ուշադիր և յափշտակուած կը նայէի իրեն , և ձեռքը բռնած լապտերին նուաղ լուսովը՝ ամենայն մտադրութեամբ իր ծիւրեալ և վտիտ երեսը կը դիտէի : Բայց որչափ ալ ջանացի միտքս բերել բոլոր դէպքերը՝ որոնց վրայ այնպիսի տեղեկութեամբ կը խօսէր , և ուղեցի անոնց մէջ ներկայացած զլիսաւոր անձանց կերպարանքը յիշել , չէի կրնար այն վայրկենին միտքս եկած անձանցմէ մէկու մը զինքը նմանցընել :

— Ուրեմն , ըսաւ տեսնելով իմ տարտամութիւնս , ուրեմն դեռ չեմ ճանչնար զիս :

— Ոչ , հայր իմ , գրեզ տեսած ըլլալս ամենեւին չեմ յիշեր :

— Երբ գղեակն հասար այն աղիտաւոր իրիկունը որ տանտէրդ մեռնելու վրայ էր , գետնէն կապոյտ թուղթ մը չժողվեցիր , զոր ետքը Լամբերտի յանձնեցիր :

— Այո , իրաւ է :

— Մէկ մը չտեսար այն մութ սրահին մէջ :

— Այո , տիրոջ մէկ ծառան տեսայ :

— Գիտեմ անունը :

— Այո , դեռ կը յիշեմ , փիլիպպոս կը կոչուէր :

— Աղէկ ուրեմն . . .

— Ուրեմն , թերեւ փիլիպպոսն ես դու :

— Փիլիպպոս մեռաւ :

— Մեռաւ :

— Այո , մեռաւ փիլիպպոս : Հիմա ուրիշ մարդ չիմնար . . .

Այն վայրկենին բացուեցաւ խղիկին դուռը . եղբայր մը սեմոց վրայէն ըսաւ . Միանձուկքը դասն են . ձեզի կը սպասեն :

Հիւրընկալ հայրը ճամբայ ելաւ . ես ալ ետեւէն գնացի :

ժե .

իրաւցընէ բոլոր միանձուներն ժող-
վուած էին եկեղեցին , որոնք արդէն
սկսած էին առաւօտեան ժամը երգել :
Ես հիւրընկալ հօրը հետ աւանդատու-
նը կեցայ , ուր ուրիշ միանձն մ'ալ
կար , որ իրեն հետ պիտի օգնէր ինծի
զգեստաւորութեան ժամանակ : Մենառ-
տանին զանգակը մահուան դանչը կը
զարնէր , նշանակելով որ մարդ մը գրա-
բեանի զգեստն աւնելով կը մեռնէր աշ-
խարհի : Այն ձայնին տխրութիւնը խիստ
յարմար էր՝ կատարուելիք մեծ գործոյն
մտածութեան վրայ միտքս ամփոփելու .
բայց մի և նոյն ժամանակ միտքս կը
ձգէր նաեւ քանի մը ցաւազին դիպուած-
ներ , զոր կը փափաքէի չյիշել բնաւ
այն վսեմ՝ վայրկենին : Աւանդատան խո-
րանին առջև ծունը դրի ջերմեռանդու-
թեամբ , և հոն մեծագոյն եռանդեամբ
Աստուծմէ լոյս և օգնութիւն խնդրե-
ցի : Մեղացս խիստ ապաշխարութեան
համար զաշխարհ թողլու խոստմունքս
նորոգեցի , և խեղճ Պաւտի հոգւոյն
համար աստուածային ողորմութենէն
հանգիստ և խաղաղութիւն մաղթելով
լմընցուցի աղօթքս :

Քիչ վերջը սքեմաութեանս արարու-
ղութիւնն սկսաւ : Այն բանին համար
սահմանեալ երկու հարք բերին զիս ե-
կեղեցին , որ գրեթէ մութ էր : Աւագ
խորանին վրայ քանի մը ճրագներ վա-
ռած էին , և անոր երկու կողմը միան-
ձուներն կեցած էին . իսկ արքան անոր
աստիճաններուն վրայ էր : Մատրան յա-
տակին վրայ մոխրապատ սև կերպաս
մը տարածուած էր . ինծի ծունը դնել
տուին . և քանի մը հասարակաց ա-
ղօթքներ մատուցանելէ ետեւ , հարցուց
արքան թէ ինչ էր խնդիրքս : Ես ալ պա-
տասխանեցի որ կը փափաքեմ՝ զրաբայի
զգեստն հագնիլ , մեղացս ապաշխա-
րութեան համար : Այն ատեն ոտք ելայ ,
և ըստ հրամանի արքային դէպ 'ի միան-
ձանց դարձայ , և հրամայեց որ հրապա-
րակաւ խոստովանիմ իմ թերութիւն .

ներս , և մասնաւորապէս անոնց մեծա-
գոյնը , Պաւտի սպանութիւնը :

Հարկ եղաւ բանալ դարձեալ այս
ցաւազին վէրքը : Երբ պատմելը լմըն-
ցուցի , արքան նորէն ինծի ծունը դնել
տուաւ , ծանր ու գորովալիւր ձայնով մը
այսպէս խօսեցաւ .

Կը շարունակուի :

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՁՈՐՈՐՈՐԴ

(Տէս երես 233)

Առաւմուշ :

Երբ , սիրելի օրիորդիկ , բոլորովին
պզտիկ էիր , այն ատեն կ'ըսեմ որ դեռ
կաթ կը ծծէիր , շրթանցդ ետեւը միայն
երկու պզտի վարդագոյն ձողեր ունէիր ,
անկարող ամենեւին խնձոր մը խածնե-
լու , վասն զի ակռայ չկար անոնց ետեւը :
Այն ժամանակը ատոնց պէտք չունէիր ,
վասն զի բերանդ միայն կաթ կը մըտ-
նէր , և ոչ ալ ստնտուիդ շահաւոր բան
կ'ըլլար՝ որ խածնել կարենայիր : Կը
տեսնաս ապա որ՝ ինչպէս վերջին ան-
գամուն զուրցեցի քեզի , Աստուած ա-
մեն բան մտածած է , և այս բանս դար-
ձեալ ուրիշ շատ առիթ պիտոր ունե-
նանք կրկնելու :

Սոկայն , կամաց կամաց այն պզտի
տղայն մեծցաւ , եղաւ մեծ աղջիկ մը , և
հարկ եղաւ մտածել՝ անոր՝ կաթէն ա-
ւելի հաստատուն կերակուր մը տալու :
Այդ բանիդ համար՝ նախ հարկ էր որ
ակռայ ունենայ : Այն ատեն մանր բող-
բոջներ՝ որ ծամելեաց մէջ ծածկուած
կը ննջէին , մէկզմէկու ետեւէ արթնցան ,
ինչպէս կտրիճ գործաւորներ որ գործե-
լու ժամուն հնչելը կը լսեն : Իւրաքան-
չիւրը իր խցիկին մէջ գործի նստաւ , և
քիչ մը փոսփորի ու կրի միջոցաւ , սկսաւ